

2013 թ-ի հուլիսի 15-ին տեղի ունեցավ Արմավիրի մարզի Կողբավան համայնքի կիսամյակային հաշվետու ժողովը: Ժողովին մասնակցում էին համայնքի ղեկավար Հ.Քոչարյանը, Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ վարչության պետ Ա.Ղուկասյանը Կողբավան համայնքի ավագանու անդամները, գյուղապետարանի աշխատակազմի անդամները, համայնքի բնակիչները:

Ժողովում կիսամյակային հաշվետու զեկույցով ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Հ. Քոչարյանը:

Արմավիրի մարզի Կողբավան համայնքում
01.01.2013 - 01.07.2013թթ.

ընկած ժամանակահատվածում կատարված
աշխատանքների

Հաշվետվություն

01.07.2013թ. դրությամբ. նախ կներկայացնեմ տվյալներ 2013թ. բյուջեի կիսամյակային պլանների կատարողականի վերաբերյալ.

1. Հողի հարկ կիսամյակային պլանով հողի հարկի գանձումները նախատեսել էինք 880,0 հազ. դրամ: Այսօրվա դրությամբ գանձել ենք 200,0 հազ. դրամ, որը կազմում է պլանային ցուցանիշի 22.7% - ը: Վստահեցնում եմ մինչև տարեվերջ հողի հարկի գանձումները կհասցնենք 100 %:
2. Գույքահարկի գանձումները կազմում են պլանային ցուցանիշի 71.1%: Տարվա 2-րդ կեսին այս հարկատեսակի գանձումները ևս կկատարենք 100 %:
3. Վարձակալությամբ տրվող հողերի վարձավճարները կիսամյակային պլանով նախատեսված 989.0 հազ. դրամի փոխարեն գանձվել է 200.0 հազ. դրամ, որը կազմում է 20.2% - ը:
01.07.2013- 15.07.2013թ. ժամանակահատվածում գանձվել է ևս 298.0.0 հազ. դրամ:

Այս մասով գանձումների ցածր տոկոսը պայմանավորված է նրանով, որ խոշոր վարձակալների մեծ մասը բնակվում է մարզի սահմաններից դուրս՝ Երևան քաղաքում և հանրապետության մյուս բնակավայրերում:

Այս մասով ես վստահեցնում եմ որ մինչև տարեվերջ գանձումները կկատարենք 100%- ով: Ընթացիկ տարվա աշխատավարիժի պարտքը կազմում է 1019.5 հազ. դրամ, բայց խոստանում եմ մինչև հոկտեմբեր փակել աշխատավարձի պարտք չունենալ: Համայնքում պարբերաբար կատարվում է աղբահանություն, վերանորոգվել է վնասված ջրագծերը:

Համայնքում առկա հիմնախնդիրներից կառանձնացնեի չորսը՝

1. համայնքի զազաֆիկացումը
2. խմելու ջրի հարցը
3. երեխաներին դպրոց տեղափոխելու հարցը

4. բուժ. կետի հարցը

Խմելու ջրի հարցը գյուղապետարանը լուծում է ցիստեռն ավտոմեքենայով համայնքի բնակիչներին խմելու ջուր մատակարարելով:

Կողբավան համայնքի ղեկավար Հ.Քոչարյանի կիսամյակային հաշվետու զեկույցը լսելուց հետո կատարված աշխատանքները գնահատվեց բավարար :

Կողբավան համայնքի ղեկավար



Հ.Քոչարյան

15 հուլիսի 2013թ.